

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի  
խորհրդի 26/03/2019թ թիվ 12-Լ որոշմամբ  
Փոփոխված է  
28/04/2020թ թիվ 11-Լ որոշմամբ  
29/09/2020թ թիվ 35-Լ որոշմամբ  
29/01/2021թ թիվ 2-Լ որոշմամբ  
24/02/2021թ թիվ 9-Լ որոշմամբ  
27/07/2021թ թիվ 24-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀՀ կենտրոնական բանկում  
«--» -----ի 2021թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մարտին Գալստյան

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի  
խորհրդի նախագահ

Ներսես Երիցյան

## **ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-002**







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ**  
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՆԴԱՄ  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ)

**ԵՐԵՎԱՆ – 2021**

**Հոսքագիր 1-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ**

**Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)**

|     |          |  |
|-----|----------|--|
| 1   | Պայման 1 | 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՊԱ-ի կողմից տրված էլեկտրոնային համաձայնություն կամ արձագանքի բացակայություն, որը հավասարեցվում է ՀՊԱ-ի համաձայնությանը:   |
| 2   | Պայման 2 | 3 աշխատանքային օրվա ընթացքում որպես ՀՊԱ ծանուցված Ապահովագրողի կողմից տրված էլեկտրոնային անհամաձայնություն՝ սույն հավելվածի 2.1-րդ կետով նախատեսված համապատասխան կետի նշմամբ:  |
| 2.1 |          | <p>Պայման 2-ով նախատեսված՝ փոխհաշվարկի հետ կապված պահանջին վերաբերող անհամաձայնությունը որպես ՀՊԱ ծանուցված Ապահովագրողի կողմից կարող է տրվել միայն, եթե ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված գործընթացների շրջանակներում՝</p> <p>ա. ԴՍԱ-ի կողմից ծանուցված ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշման փաթեթն ամբողջական չէ՝ ըստ ԱՊՊԱ ընդհանուր պայմանների պահանջների,</p> <p>բ. որպես ՀՊԱ ծանուցում ստացած Ապահովագրողը ՀՊԱ չէ,</p> <p>գ. ԴՍԱ-ի կողմից ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշմամբ նախատեսված ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված ապահովագրական գումարը,</p> <p>դ" ԴՍԱ-ի կողմից նշանակված լրացուցիչ փորձաքննությունն իրականացվել է ԱՊՊԱ ընդհանուր պայմանների դրույթների խախտումներով,</p> <p>ե. առկա են ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված հիմքեր հատուցում վճարելու վերաբերյալ դիմումը մերժելու կամ հատուցման գումարը նվազեցնելու համար,</p> <p>զ. տուժողին պատճառված վնասը հնարավոր է հստակ տարանջատել ըստ մի քանի վնաս պատճառողների, սակայն ԴՍԱ-ի կողմից նշանակված փորձաքննությամբ փորձագետը գնահատման եզրակացությամբ այդ հարցին չի անդրադարձել (բացակայում են փորձագետի գրավոր հիմնավորումները),</p> <p>է. պատահարում առկա է այլ ՀՊԱ, որին ներկայացված չէ փոխհաշվարկի հետ կապված պահանջ,</p> <p>ը. ՊԿԱ-ն ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով ծանուցված չի եղել պատահարի մասին, ընդ որում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի գծով առկա է այլ ՊԿԱ, որը ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով սահմանված կարգով եղել է ծանուցված պատահարի մասին:</p> <p><u>թ. ԴՍԱ-ի կողմից ԱՄՄՊ համակարգ մուտքագրված ելակետային տվյալները չեն համապատասխանում համապատասխան փաստաթղթերում ամրագրված ելակետային տվյալներին:</u></p> |

|   |   |  |
|---|---|--|
| 3   | Պայման 3  | ՀՊԱ-ն համաձայն չէ ԴՍԱ-ի կողմից ներկայացված պարզաբանումներին կամ իրականացված ճշգրտումներին և իր անհամաձայնության մասին տեղեկացրել է ԴՍԱ-ին և Բյուրոյին 3 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 4   | Փոխհաշվարկում ներառվում է սույն կանոնների 4-րդ կետով նախատեսված ամսվա փոխհաշվարկներում: |  |
| <b>Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ</b>                                  |   |  |
|  | Գործողություն   |  |
|  | Ժամկետ<br>(գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)                |  |
|  | Պատասխանատու  |  |
|  | Պայման  |  |
|  | Պարտադիր գործողություն  |  |
|  | Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը  |  |
| Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո:      |   |  |
| Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:             |   |  |